

Բ.

ԴԱՐԱՎԵՐՋԻ ԲԱՐՔԵՐԻՑ

«Մահ Զօլային . . . Երկ Զօլայի վերայ . . .»

(Լազարճեհից)

Տխուր մտքեր են ինձ յուզում այսօր —
Այս ի՞նչ արտամաշ գոտար ժամանակ
Մեզ վիճակուել է ապրել — եւ անգոր՝
Տեսնել չարութեան լկտի յաղթանակ . . .

Խիղճ, պատիւ, օրէնք՝ ուրքի տակ տուած,
Մարդիկ ծաղրում են ազատ զգացմունք .
Եւ ազգասէրի կեղծ դիմակ հագած՝
Կոկորդիլոսի Թափում արտատունք :

Եւ կոյր ամբօխի զայրոյթն ու յուզում
Կորուստ է սպանում մտքին, տաղանդին .
Որպէս պղտոր ծով, լափել է ուզում
Դաշար ափ դիմող արի՝ լողորդին :

Զինամուկութեան ոգին աւերիչ
Ծանուն ազգային առաջդիմութեան ,
Մարդասպան սրբով փշրում է գորիչ .
Անպարտին ճնշում երկարէ շղթան . . .

Օ՛ր, մեր լուսաւոր, գոված դարավերջ ,
Ո՛ր է քո բաշխած լոյսը աշխարհին .
Կեղծի՛ք, չարութի՛ւն, հալածա՛նք անվերջ —
Ահա՛ քո աւանդն յետագայ դարին . . .

25 Մարտ 1898

Փ.

Պ Օ Յ Է Տ

(ՊՈՒՇԿԻՆ)

Քանի Ապոլոն չէ՛ կուէլ երգչին
Դէպի արբազան ոգեւորութիւն ,
Ունայն աշխարհի հոգսերի միջին
Թաղուած է պոյէտն անխանդ անախն .
Ձէ՛ նչում նորա քընարն ոգեկոյց ,
Յուրա թմրութիւն է հոգին ճաշակում .
Եւ , գուցէ , չնայն շատ էակներեց
Ամենից չնայն նա՛ է աշխարհում :

Բայց հէնց հասնում է արթուն, յուշազգաց

Երգչի ականջին բարբառն երկնային .
Որպէս մի արծիւ քննից սթափուած՝
Յնցվում է իսկոյն պոյէտի հոգին :

Եւ նա , անհաղորդ՝ ծափին ու գովքին ,
Տխրում, արտում է զուարճ աշխարհում .
Ամբօխի պաշտած եւ ոչ մի կուռքին
Երբէք պոյէտը զուել չէ խնարհում .
Եւ կարծես կեանքի խորթ, դաժան զուակ ,
Երգով, յոյգերով կուրծքը պակեկոծ ,
Փախչում է նա միշտ դէպի լայնարձակ
Դաշտեր , անապատ , թաւ անտառի ծոց :

(Թարգմ. ռուս.)

25 Հոկտ. 1898 ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆ
Մոսկուա

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր գրականութիւնը մենք իսկ չենք ճանչնա-
նար ամբողջապէս եւ ինչպէս որ պէտք է՝ Մեր
նախնիքներուն ձգած ձեռագիրներէն հրատա-
րակուած են միմիայն պատմական եւ կրօնական
գործերը , այն պարզ պատճառով որ հրատարա-
կողները վանականներ եղած են ընդհանրապէս :
Նոյն իսկ այդ պատմական եւ կրօնական գործերը
փակ կը մնան հայ ժողովրդին կամ փնրաստօ-
րէն ծանօթ են անոր, որովհետեւ անոնք իրենց
գրաբար բնագործով գոյութիւն ունին լոկ , եւ
ժողովրդին մեծամասնութիւնը գրաբար չի գի-
տեր եւ չի կրնար գիտնալ :

Խորենացին , Փարպեցին , Եղիշէն , Լաստի-
վերտացին , Բիւզանդացին , Նարեկացին , Շնոր-
հալին , Լամբրոնացին խորհրդաւոր ստուերի մը
մէջէն երեւցած են միշտ մեր ժողովրդին , եւ
գրաբար գիտցող փոքրամթիւ հայեր միայն մօ-
տէն ճանչցած եւ վայելած են անոնց գործերը :
Ստուար զանգուածը որ ազգը կը կազմէ՝ անոնց
վրայ տեղեկութիւն ունի ազգային պատմու-
թեանց կամ հատուածական ուսումնասիրու-
թեանց մէջ անոնցմէ յիշուած կտորուանքներէն :
Կենսական պէտք մը լրացուած կ'ըլլար եթէ հայ
մտքին այդ վաղեմի մշակներուն արտադրու-
թիւնները արդի հայութեան ներկայացուէին՝
այսօրուան հայերէնին վերածուած :

Ռուսահայերը այս պէտքը առաջին զգացող-
ները եղած են . իրենց բազմարդիւն Հիւսիսա-
փայլին մէջ , Նազարեան եւ Նալբանդեան քանի
քանի անգամ յայտնած են հին մատենագրու-